# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ԲԿԳԿ-ԳՀԾՁԲ-26/56 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **01 հուլիսի 2026թ.**

2026թ. հունիսի 10-ից հուլիսի 01-ը, ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22 հասցեում գտնվող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի շենքում տեղի ունեցավ նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման ծառայությունների ձեռքբերման թիվ ԲԿԳԿ-ԳՀԾՁԲ-26/56 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ս. Հայոցյան՝ | Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ, |
| Ա. Երիցյան՝ | Քաղաքաշինության կոմիտեի քաղաքաշինական ծրագրերի իրականացման վարչության առանձին գործառույթներ համակարգող խորհրդական, |
| Ա. Սմբատյան՝ | «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ գլխավոր տնօրենի տեղակալ, անվտանգության և վերահսկողության տնօրեն, |
| Դ. Գրիգորյան՝ | «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ գլխավոր տնօրենի տեղակալ, Տեխնիկական տնօրեն, |
| Է. Հովհաննիսյան՝ | «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ տեխնիկական տնօրենի տեղակալ, |
| Տ. Պետրոսյան՝ | «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ անվտանգության և վերահսկողության տնօրինության տեխնիկական վերահսկողության բաժնի պետ, |
| Ջ. Ղարագյոզյան՝ | «Ակադեմիական քաղաք» հիմնադրամ, փորձագետ-գնումների մասնագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ս. Հայոցյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Լ. Հայրապետյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է յոթ անդամից և նիստին էլ մասնակցել են բոլոր յոթ անդամները, հետևաբար Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:
3. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:
4. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
5. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:
6. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:
7. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:
8. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. հունիսի 10-ին, ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22 հասցեում գտնվող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի շենքում ժամը 17:30-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված հետևյալ տեղեկատվությունը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1-ին | «Ակադեմիական քաղաքի» տարածքով անցնող «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հաշվեկշռում հաշվառված 6, 35 և 110 կՎ լարման օդային գծերի հատվածների ստորգետնյա եղանակով տեղափոխման և բաշխման ցանցին միացման, ինչպես նաև «Ակադեմիական քաղաքի» արտաքին էլեկտրամատակարարման համակարգի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման ծառայություններ | 35,000,000.00 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:
Կողմ՝ 7, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև Մասնակից/ներ/ը/.

| Հ/Հ | Մասնակցի | Հասցեներ | Հեռախոս | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|---|

| | անվանում | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Վոլիոս նախագծային ինստիտուտ» ՓԲԸ | Երևան, Խորենացի 33, 6-րդ հարկ | 094645555 | tender@volios.am | 00902375 |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 7, դեմ՝ 0:

## 3. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին, ինչպես նաև արձանագրեց, որ Մասնակից/ներ/ի կողմից ներկայացված հայտում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ **«Վոլիոս նախագծային ինստիտուտ» ՓԲԸ-ի, ում** կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերի 2.4.1 կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջներին, մասնավորապես բացակայում են **«Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ**-ի հետ կնքված ծառայությունների վճարովի մատուցման թվով 2 պայմանագրերի կատարումը հավաստող հարկային հաշիվ/հաշիվ վավերագիրը և կատարված աշխատանքների պորտֆոլիոն, ԴԳ-1160, ԴԳ-3950, ԴԳ-4244 գրությունների հիման վրա կնքված պայմանագրերը, որտեղ հստակ երևում են գնման առարկաները, կատարումը հավաստող հարկային հաշիվ/հաշիվ վավերագրերը և կատարված աշխատանքների պորտֆոլիոները, ԲԷՑ-ԳՀԾՁԲ-20/45 խորհրդատվական ծառայությունների գնման պայմանագրի կատարումը հավաստող հարկային հաշիվ/հաշիվ վավերագիրը և կատարված աշխատանքների պորտֆոլիոն: Ինչպես նաև հայտում բացակայում են Ընթացակարգի հրավերի 2.4.1 կետի 3-րդ ենթակետով սահմանված մասնագետների դիպլոմները, միաժամանակ Հավելված 1.3-ով ներկայացված «Կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկատվություն» փաստաթղթում անհրաժեշտ է հստակեցնել Սասուն Միրզոյանի գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը՝ համապատասխանեցնելով փորձառությունը պահանջվող «էներգետիկ համակարգերի նախագծման» ոլորտին:

Կողմ՝ 7, դեմ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած Մասնակից/ներ/ի գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գնման գինը | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1-ին | «Ակադեմիական քաղաքի» տարածքով անցնող «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հաշվեկշռում հաշվառված 6, 35 և 110 կՎ լարման օդային գծերի հատվածների ստորգետնյա եղանակով տեղափոխման և բաշխման ցանցին միացման, ինչպես նաև «Ակադեմիական քաղաքի» արտաքին էլեկտրամատակարարման համակարգի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման ծառայություններ | «Վոլիոս նախագծային ինստիտուտ» ՓԲԸ | 35,000,000.00 | 26,250,000.00 | 5,250,000.00 | 31,500,000.00 |

Կողմ՝ 7, դեմ՝ 0:

2026թ. հունիսի 23-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 7, դեմ ՝ 0:

2026թ. հունիսի 25-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. Մասնակից/ներ/ի կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 7, դեմ ՝ 0:

2026թ. հուլիսի 01-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-ին | «Վոլիոս նախագծային ինստիտուտ» ՓԲԸ | բավարար |

Կողմ՝ 7, դեմ՝ 0:

2026թ. հուլիսի 01-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած Մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և այդպիսին չճանաչված Մասնակիցներին, որոնք ներկայացված են ստրև բերվող աղյուսակում.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Մասնակցի անվանումը | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|
| 1-ին | «Վոլիոս նախագծային ինստիտուտ» ՓԲԸ | X | 26,250,000.00 |

Կողմ՝ 7, դեմ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոգրյալը, 2026թ. հուլիսի 01-ին Հանձնաժողովը որոշեց, որպես Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով ընտրված և այդպիսին չճանաչված Մասնակից հայտարարել սույն արձանագրության 4-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած Մասնակիցների թվից այն Մասնակիցներին, ովքեր ներկայացրել են նվազագույն գնային առաջարկ:

Կողմ՝ 7, դեմ՝ 0:

## 6. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Լ. Հայրապետյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չկիրառել:
2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 7, դեմ՝ 0:

## 7. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

2. Գնման վերաբերյալ 2026թ. հունիսի 04-ին և 05-ին ներկայացվել են հարցումներ, որոնց 2026թ. հունիսի 08-ին տրվել են պարզաբանումներ, իսկ հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 7, դեմ՝ 0:

## 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված Մասնակից/ներ/ին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ սահմանված ժամկետում պայմանագիրը չստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում Մասնակիցը կզրկվի պայմանագիրը կնքելու իրավունքից՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 7, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ս. Հայոցյան

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ա. Երիցյան

Ա. Սմբատյան

Դ. Գրիգորյան

Է. Հովհաննիսյան

Տ. Պետրոսյան

Ջ. Ղարագյոզյան

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Լ. Հայրապետյան